ԾՆՆԴԵԱՆ ԳԻՇԵՐԸ

Արծաթափայլ լուսնակը,
Շրջապատած աստղերով,
Կատարում է իւր ընթացքը
Հանդարտ ու պարզ գիշերով:

Խաղաղութիւն է երկնքում,
Խաղաղուի՛ր դու էլ ե՛րկիր.
Ահա՛ Յիսուս կոյս մօր գրկում,
Նոքա՛յր, նոքօրդ գրկի՛ր:

Ատելութիւնն ու թշնամանք
Թող աշխարհից վերանան,
Մարդիկ կազմեն մի սիրտ հաւատանք
Սիրով կապուին միանան։

Եւ ձայնակցեն հրեշտակներին,
Փառք ի բարձունս երգելով,
Որ մեզ խղճաց Տէրն երկնային,
Մարդկանց Փրկիչ ղրկելով:

ԲԱՐԵՍԻՐՏ. ՄԱՐԴ

Ես քնում եմ տաք անկողնում,
Երբէք չրտից չեմ կոնկոռնում,
Փորս կուշտ է, սիրտս ուրախ,
Երբէք քաշում չեմ ախ ու վախ։

Տունս պատրաստ գեղեցկաշէն,
Կահ կարասիքս թանկ արժէն,
Եւ ամեն օր խնջոյք, երգ, պար
Զեն պակասում տանս իսպառ։

Բայց կան, որոնք չունին տաք շոր,
Ման են գալիս բոբիկ, տկլոր.
Զոր հացին էլ կարօտ են միշտ,
Նոցա կեանքն է անընդհատ վիշտ։

Բայց ո՞ր մէկին հաց տամ, օգնեմ.
Անչափ շատ են, ես կը յոգնեմ։—
Շատ մտածել զո՛ւր է, չարժէ՛.
Նոցա հոգսն էլ Աստուած քաշէ:

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ